Известия НАН РА, Науки о Земле, 2007, LX, №2, 63

ԱՆԽՈՆՋ ԳԻՏՆԱԿԱՆԸ
(Ն.Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Լրացավ մեծ վաստակ ունեցող սեյսմաբան, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու, ճանաչված գիտնական Նադեժդա Կարապետի Կարապետյանի ծննդյան 80-ամյակը (1927–1992): Ն.Կ.Կարապետյանը ծնվել է ՌԴ Պյատիգորսկ քաղաքում, որտեղ և ստացել է սկզբնական կրթություն: 1949թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը՝ ստանալով ինժեներ-շինարարի որակավորում: 1949-1952թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Մոսկվայի Երկրի ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում, պաշտպանել գիտական թեզը և ստացել ֆիզ-մաթ. գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Գիտական գործունեությունը սկսել է ՀԳԱ Բյուրականի աստղադիտարանում և ՀՊՃՀ ֆիզիկայի ամբիոնում, որպես ավագ դասախոս: 1958թ. ընդունվել է աշխատանքի ՀՀ պետշինի շինանյութերի և կառուցվածքների գիտահետազոտական ինստիտուտում, որպես ավագ գիտաշխատող: 1961թ. տեղափոխվել է աշխատանքի ՀՀ ԳԱԱ նորաստեղծ Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտում, որտեղ տարել է ակտիվ գիտական գործունեություն սեյսմաբանության, ինժեներային սեյսմաբանության բնագավառներում: Հեղինակ է 100-ից ավելի գիտական հոդվածների և տաս մենագրությունների, որոնց զգալի մասը հրատարակված է արտասահմանում: Նրա աշխատանքներում լուսաբանվել են սեյսմատեկտոնիկայի, սեյսմիկ միկրոշրջանացման, երկրաշարժերի օջախների մեխանիզմների որոշման և այլ շատ կարևոր հարցեր: Նրա գրչին են պատկանում «Սեյսմիկ տատանումների սպեկտրները Հայաստանի տարածքում» (Երևան, 1973), «Հայկական լեռնաշխարհի երկրաշարժերից առաջացած սեյսմիկ ալիքների հոդոգրաֆները» (Երևան, 1974), «Սեյսմիկ ազդեցությունը շենքերի և կառույցների վրա» (Մոսկվա, 1973, համահեղինակ՝ Բ.Կարապետյան), «Հայկական ՍՍՀ-ում երկրաշարժերի կանխագուշակման նախանշանները և սեյսմակայուն շինարարությունը» (Երևան, 1981, համահեղինակ՝ Բ.Կարապետյան), «Հայաստանի լեռնաշխարհի սեյսմաերկրադինամիկան և երկրաշարժերի առաջացման մեխանիզմը» (Երևան, 1990) և այլն: Վերջին աշխատությունը թարգմանվել է անգլերեն և հրատարակվել Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1991թ.: Մասնակցել է միջազգային նստաշրջաններին և ներկայացրել գիտական կարևոր արդյունքները հանդես գալով զեկուցումներով (Վիեննա, Բուդապեշտ, Կրակով, Պրահա և այլ): Եղել է «Գիտելիք» ընկերության և ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրության անդամ: Պարգևատրվել է «Ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի», «Վ.Ի.Լենինի ծննդյան 100-ամյակի», «Անձնվեր աշխատանքի համար», «Հայրենական Մեծ պատերազմի ավարտման 30-ամյակի առթիվ» մեդալներով:

Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքներին ակտիվ մասնակցելու համար Կառավարության կողմից, հետմահու, պարգևատրվել է շնորհակալագրով և հուշամեդալով:

Նա գիտնական էր, գիտության մշակ՝ այդ բառի լրիվ իմաստով: Իր աշխատություններով նա նպաստել է սեյսմատեկտոնիկայի, սեյսմիկ շրջանացման, երկրաշարժերի օջախների մեխանիզմի և գետնի ցնցումների մի շարք բարդ հարցերի բացահայտմանը: Նրան առանձնացնում էր նյութի և ուսումնասիրման օբյեկտի նկատմամբ բազմակողմանի և բարեխիղճ գիտական մոտեցումը: Նրան բնորոշ էին մեծ ձգտումը ընդլայնելու գիտելիքների իր պաշարը, տեսնելու, նկատելու, իր ուսումնասիրությունների շրջանակը հարստացնելու հատկությունները: Նրան բնութագրական էր գիտական խոսքի ներկայացման հստակությունը և պարզությունը:

Գիտական մեծ ժառանգություն թողած և մարդկային բարձր հատկանիշներով օժտված անձնավորության պայծառ հիշատակը միշտ վառ է մնում նրա գործընկերների, բարեկամների և նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրություն